ԴԻՄՈՐԴ - 2015

# ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 2-ին մեկնարկեցին Միասնական ազգային քննությունները:***

Քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլու հայտարարությամբ, հուլիսի 2-ին ազգային քննությունները մեկնարկեցին վրաց լեզվի եւ գրականության քննությամբ: Քննական կենտրոնները գործում են երկրի 11 քաղաքներում՝ Բաթումի, Փոթի, Զուգդիդի, Օզուրգեթի, Քութայիսի, Ախացիխե, Գորի, Թբիլիսի, Ռուսթավի, Թելավի եւ Խուլո: Հիշեցնենք, որ Միասնական ազգային քննությունների համար գրանցվել էր շուրջ 40 հազար դիմորդ: Թեպետ 13 հազարը գրանցումից հանվեց, քանի որ նրանք չհասցրեցին ստանալ ավարտական վկայականները:

Մայա Միմինոշվիլու հայտարարությամբ, հուլիսի 2-ին քննությունների առաջին հոսքի համար գրանցվել էր 9583 դիմորդ, որից 305-ը՝ մոտ 3 տոկոսը, չի ներկայացել քննության, 3-ը ուշացել են, իսկ մեկին քննություններից հեռացրել են ոչ սթափ վիճակում գտնվելու պատճառով:

# ՄԻԼԵՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆՑ ՄԻԱՅՆ ՔԵԶ ՀԱՄԱՐ Է ԿԱՐԵՎՈՐ»



***Հուլիսի 2-22-ը ներառյալ, Վրաստանում անցկացվում են Միասնական ազգային քննությունները: Ինչպես հայտնում են Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնից, դիմորդների թիվն այս տարի գերազանցել է 40 000-ը, ինչը գրեթե համապատասխանել է հատկացված տեղերի թվին՝ 44 600-ից ավելիին: Այդուհանդերձ, կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին մեզ հետ զրույցում կարեւորել է դիմորդների գիտելիքների առկայությունն ու ճիշտ կիրառման կարեւորությունը՝ նշելով, որ, օրինակ, անցած տարի գրանցվել էր 42 000 դիմորդ եւ միայն 28 000-ին էր հաջողվել հաղթահարելու պատնեշը՝ թափուր թողնելով 13 000 տեղ:***

***Այս ուսումնական տարվա փոփոխությունները, մասնավորապես, կապված են անգլերենը՝ որպես օտար լեզու, ընտրելու դիմորդների մեծաթվության հետ: Եթե նախորդ տարի մոտ 18 000 դիմորդ էր ընտրել անգլերենը որպես օտար լեզու, այս տարի թիվը գերազանցել է 29 000-ը: Բացի դրանից, 600 դիմորդ ցանկացել է հանձնել Քաղաքացիական կրթության քննությունը, որ նորարություն է քննական առարկաների ցուցակում:***

***Ինչ վերաբերում է այս հարցում ֆինանսների ապահովմանը, ասենք, որ Վրաստանի կառավարությունը 2015-2016 ուստարում միայն գրանտային համակարգի համար հատկացրել է 12 միլիոն 600 000 լարի:***

***Ինչպես եւ նախորդ տարի, 100 տոկոսանոց ֆինանսավորում, իհարկե, պատնեշի հաղթահարման դեպքում, տրամադրվելու է միայն իրավական, առողջապահական ուղղության, բիզնես-վարչարարական /բացի տուրիզմից/, զանգվածային կոմունիկացիայի, ժուռնալիստիկայի, միջազգային հարաբերությունների եւ հանրային կառավարման ֆակուլտետների ուսանողներին: Այստեղ մասնակի ֆինանսավորման մոդելը չի գործում. կամ 100 եւ կամ ոչ մի տոկոս:***

*Երջանիկներից մեկը...*

Ուղիղ մեկ տարի առաջ հենց այս երկընտրանքի առջեւ էր կանգնած նաեւ Միլենա Մանուկյանը, ով այսօր արդեն Թբիլիսիի Իլիայի անվան պետական համալսարանի բիզնես-վարչարարության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողուհի է եւ, ամենակարեւորը, սովորում է պետական 100 տոկոսանոց ֆինանսավորմամբ: Միլենային՝ որպես զրուցակից, ընտրեցինք խրախուսելու համար հենց բոլոր այն դիմորդներին, ովքեր այսօր կամ թեկուզ մեկ տարի անց, պատրաստվում են շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

*...Բախտն այստեղ դեր չի խաղում*

- Երբ սովորում ես դպրոցում, մի տեսակ չես գիտակցում, թե որքան կարեւոր են այդ տարիները,- խոստովանում է Միլենան:- Երբ հասավ պահը, նոր միայն գիտակցեցի, որ ուժերս բավարար չէին անվճար ուսումնառության համար եւ, քանի որ ընտանիքս վճարունակ չէր, որոշեցի այդ տարի պարապել տանը՝ ինքնուրույն: Այդուհանդերձ, տարին անիմաստ չանցավ: Ավարտեցի մի քանի հաշվապահական դասընթացներ, ստացա հավաստագրեր: Իսկ որոշ ժամանակ անց, աշխատանքի անցա ինտերնետ սրճարանում, ինչն, ի դեպ, առավել համոզեց, որ բուհ ընդունվելը պարտադիր է: Ընդամենը երեք-չորս ամիս պարապեցի եւ ապա համարձակություն ունեցա մասնակցելու Ազգային միասնական քննություններին: Ընդունվեցի մրցութային կարգով, առանց որեւէ զիջումների, վրաց լեզվով: Քննական առարկաներից՝ վրացերենից ստացա 66 բալ՝ 80-ից, ընդհանուր հմտություններից՝ 64 /80-ից/, ռուսերենից՝ 99 /100-ից/ եւ աշխարհագրությունից՝ 49 բալ /70-ից /:

*«Մի քանի ամիս պարապեցի եւ համարձակություն առա մասնակցել քննություններին»*

- Գործոններից երեւի ամենակարեւորն այս պարագայում վարցերենն էր,- ասում է Միլենան,- որպեսզի լիարժեքորեն կարողանայի դրսեւորվել՝ թե' բանավոր եւ թե' գրավոր քննությունների ժամանակ: Ես, առհասարակ, միշտ այդ կարծիքին եմ, որ պետական լեզվի իմացությունը հենց միայն քեզ համար է կարեւոր, որ երկրում էլ ապրես: Շատ անգամ՝ մայրենիիդ հավասար ու դեռ ավելին՝ առավել ինտեգրվելու: Եվ հենց պետական լեզվի տիրապետումն ինձ օգնեց, որպեսզի դառնամ մեկը՝ հազարի ու թեկուզ հարյուրի մեջ: Իսկ սա, կարծում եմ, յուրաքանչյուր դիմորդի երազանքների գագաթնակետն է, մանավանդ, երբ արդյունքում ընդունվում ես նախընտրածդ ֆակուլտետը ու այն էլ՝ անվճար: Մեկ տարի առաջ, ես նույնիսկ վախենում էի այս մասին խոսել կամ երազել, հիմա հասկանում եմ, որ սա պարզ ճշմարտություն է, եթե աշխատես ու ջանաս, կստացվի: Իրոք բարդ է, բայցեւ՝ իրական:

*Ուսանող լինելու բերկրանքը...*

- Մաթեմատիկան իմ բնագավառն է,- ասում է Միլենան,- եւ հետո, համալսարանն էլ լայն հնարավորություններ է ընձեռում ուսման հետ աշխատանքը զուգահեռելու համար: Բուհն ունի էլեկտրոնային համակարգ եւս: Ուսանողներս վիդեոդասընթացների տարբերակն ընտրելու, տնային հանձնարարությունները դասախոսին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելու եւ այլ նման հնարավորություններ ունենք: Այդ իսկ պատճառով, հաճախ ֆիզիկական ներկայությունը դասախոսություններին պարտադիր չէ: Այս համակարգի շնորհիվ, սկսեցի աշխատել իմպլանտային նյութեր ներմուծող կազմակերպությունում: Աշխատանքը շահավետ է այն առումով, որ մասնագիտականս գործնականում կիրառելու հնարավորություն ունեմ, դրան զուգահեռ, որոշ դասեր եմ քաղում բժշկության ու տեխնոլոգիաների ոլորտից: Աշխատանքային ժամակարգն այնպիսին է, որ հասցնում եմ հաճախել որոշ դասախոսություններին եւ միավորներ վաստակել ակտիվությանս համար եւս: Այժմ ես փորձում եմ որքան հնարավոր է հաջողությունների հասնել ուսման ու աշխատանքի մեջ: Ենթադրում եմ, որ ավարտելուց հետո, հենց այստեղ էլ կշարունակեմ կարիերաս, քանի որ այս հողի անքակտելի մասնիկն եմ:

Որպես ընդունելության քննությունները հաջողությամբ հաղթահարած ուսանողուհի՝ Միլենային խնդրեցինք մեկ նախադասությամբ խրախուսել այս օրերին իրենց ուղին նորովի հարթող երիտասարդներին:

- Կան քննահարցեր ու առաջադրանքներ,- ընդգծեց Միլենան,- որոնց ժամանակ պետք չէ վախենալ սեփական մտքերն արտահայտելուց, եթե նույնիսկ դրանք օրինաչափ չեն ու արտասովոր են թվում: Սա չի նշանակում, որ սխալ են: Երբեմն, ընդհակառակը, հենց դրանք են որոշիչ դառնում ուսանողական կյանքը հետագայում արդեն լիարժեքորեն վայելելու համար: Հաջողություններ ու համարձակություն բոլորիդ, սիրելի' դիմորդներ:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ԳՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

## ՎԱՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ
## ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գրեթե 50-ամյա մանկավարժական գործունեություն ծավալած վաստակաշատ մանկավարժ, Ախալքալաքիի շրջանի Փոքր Սամսար գյուղի հանրային դպրոցի տնօրեն, բանաստեղծ, արձակագիր, լրագրող Վանիկ Ավագյանը ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, ապա՝ Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը, ինչպես նաեւ ժողովրդական համալսարանի ու գեղագիտական դաստիարակության լրիվ դասընթացները:

Առաջին գիրքը՝ «Սպասում» եւ «Կարոտ» քնարաշարերով, հրատարակվել է Թբիլիսիի «Մերանի» հրատարակչության կողմից՝ բանաստեղծուհի Ա.Բոստանջյանի առաջաբանով, Ա.Չոբանյանի խմբագրությամբ:

Գրողին համընդհանուր ճանաչում բերեց «Տառապանքի արշալույսներ» պատմա-գեղարվեստական ծավալուն վեպը եւ «Անտեսանելի արցունքներ» պատմվածքների ու վիպակների ժողովածուն:

Վերջերս հրատարակվեց գրողի «Գարուն» քնարական երգերի գիրքը:

Շուտով Երեւանի «ԳԱՄ-Սպրինտ» հրատարակչությունը լույս կընծայի գրողի նոր գրքերը՝ «Մայրամուտի խոհեր» բանաստեղծությունների ու քառյակների ժողովածուն:

* * *

*Մի անանձնական անգո լռություն*
*Կախվել է ձորում՝ ժայռի պռնկից,*
*Ներքեւում գետն է ահեղ մռնչում,*
*Հիշեցնում ձորին, որ կյանքը հեռվից*
*Մի անիրական երազ է միայն,*
*Ջրի նման խոր ու խորհրդավոր,*
*Այն ժայռի նման հսկա, բարձր ու վես,*
*Ի՞նչ կային կյանքում տխուր, մենավոր*
*Անհետ չքացե՞լ միրաժի նման,*
*Դարձել են երազ՝ կարոտի հանդես,*
*Դարձել տխուր հուշ, կապուտաչ հեռու,*
*Դարձել բնության կամավոր, հլու:*
*Արդ՝ անձեռակերտ թանգարան ձորում*
*Ի՞նչ անցավ-գնաց, էլ չի դառնալու,*
*էլ չի՛ դառնալու:*

* * *

***Մայր իմ, անուշ ու անգին...***
***Ե.ՉԱՐԵՆՑ***

*Իմ կարոտները շիրմաքար դարձան,*
*Հանգչում են նրանք իմ հոգու խորքում,*
*Բայց սառն հայացքով, դաջված քարերին,*
*Խոսուն հայացքով նայում են նրանք...*
*Շիրմաքարերից մեզ նայող դեմքեր,*
*Այնպես ծանոթ եք, այնպես հարազատ,*
*Այցի եմ եկել ձեզ, ձեզ վերստին,*
*Որի՞դ կրծքի տակ մոմերս վառեմ,*
*Ո՞ւմ դեմ աղոթքի իջնեմ կամովին...*
*Ա՜խ, շիրմաքարեր, սառն ու մահահոտ,*
*Ես ինչպե՞ս, ինչպես ձեր լռությունը*
*Հասկանամ,*
*սիրեմ,*
*պահեմ սրտիս մոտ:*
*Ես ում անվան դեմ*
*ինչպես խոնարհվեմ,*
*Լուռ շիրմաքարեր, դե', ասեք տեսնեմ,*
*Իմ հուշ աշխարհում եւ իմ գոյությամբ,*
*Ինձ նայող դեմքեր, որ մեկիդ փարվեմ:*
*..............................................*
*Իմ կարոտները շիրմաքար դարձան:*

* * *

*Մեղմ զեփյուռների համբույրների հետ*
*Հանդարտ, համընթաց իջնում է օրը,*
*Մեր Մթնասարի լանջով թիկնավետ*
*Ամպերը հանգիստ սահում են ձորը:*

*Եվ ահա կրկին բացվում է օրը,*
*Անէանում է մշուշը դանդաղ,*
*Բացվում է իմ դեմ այգին ու ձորը*
*Ու մարգարտաշող մի նուրբ շամանդաղ:*

*Ծանոթ են հոգուտ օրերն այս լռին,*
*Մաշել եմ այնտեղ մանկություն բազում,*
*Երգել եմ գետի խոխոջը այն հին,*
*Եղել եմ առողջ, կայտառ ու խոսուն:*

*Արդ կանգնել եմ ես ձորի պռնկին՝*
*Իմ հուզումների երգը շուրթերիս,*
*Նայում եմ դալար, գլորվող գետին*
*Ու զգում գարունը թախծոտ երգերիս:*

***Եթե դուք գրում եք չափածո կամ արձակ, ունեք հրապարակումներ կամ առաջին գրական փորձերն եք անում, ձեր գործերն ուղարկեք մեզ (տպագիր 3 էջից ոչ ավելի): Լավագույնները կտպագրվեն:***

***«Վրաստան»-ը սիրով սպասում է ձեր ստեղծագործություններին:***

ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ԱԽԱԼՑԻԽԵՆ ՆՇԵՑ ՔԱՂԱՔԻ ՕՐԸ



***Վերջին տարիների ավանդույթի համաձայն, հունիսի վերջին օրը՝ 30-ին, Ախալցիխեն նշում է քաղաքի օրը: Տոնական միջոցառումների հիմնական մասը տեղի ունեցավ քաղաքի Ռաբաթ բերդի տարածքում: Առավոտից բերդի տարածքում բացվել էին բազմաթիվ սրահներ, տաղավարներ, պարահրապարակներ եւ մարզադաշտեր:***

Սրահներում եւ տաղավարներում տարբեր անհատներ եւ կազմակերպություններ հանրությանը ներկայացրեցին իրենց ձեռքի աշխատանքները: Այս տարի, առաջին անգամ, մնացած բոլոր տաղավարների կողքին, բացվեց նաեւ տեղի հայերի տաղավարը. դա հնարավոր դարձավ Ախալցիխեի սակրեբուլոյի պատգամավոր Համբարձում Բաբոյանի ջանքերով:

Տոնի մասնակիցներին ներկայացված էին Ախալցիխեի ժամանակակից նկարիչների, այդ թվում՝ Ալեքսանդր Իգիթխանյանի գործերը, Գեւորգ Պետրոսյանի դարբնոցի մետաղագործական, զինագործ Մկրտիչ Խակցյանի աշխատանքները եւ լուսանկարիչ Սերգեյ Ֆիդանյանի լուսանկարները:

Տեղի հայերի տաղավարի ցուցանմուշները մեծ հետաքրքրություն առաջացրեցին այցելուների ու զբոսաշրջիկների շրջանում եւ արժանացան Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Ակակի Մաճուտաձեի, Ախալցիխեի քաղաքապետ Գիորգի Կոպաձեի շնորհակալական խոսքին ու պատվոգրերի:

Երեկոյան բերդի տարածքում տեղի ունեցավ համերգ, որտեղ մյուս համույթների հետ միասին, իր հիասքանչ կատարումներով աչքի ընկավ Ախալցիխեի Հայկական երիտասարդական կրթամշակութային կենտրոնի «Գոհանամք» երգի ու պարի համույթը:

*ՆՈՒՆՈՒՇ ՄԱՆՈՒՇՅԱՆ*
*ք. Ախալցիխե*

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü * ²ÚÈ²¼²Ü * ÊàÐÐàôð¸Ü°ð

ì²ðìºÈ²Îºðä

## ԴԻԵՏԱ՝ ԾԵՐԱՆԱԼՈՒՆ ԴԵ՞Մ



***Լսել եմ, որ մշակվել է դիետա, որը արգելակում է օրգանիզմի ծերանալու գործընթացը: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:***

***Ն. Նաղդալյան***

***Ախալքալաքի***

Իրոք, նման սննդակարգ (դիետա) մշակվել է, թեպետ այդ ուղղությամբ ուսումնասիրությունները շարունակվում են:

ԱՄՆ-ի հետազոտողներն ընդհուպ մոտեցել են այն բանի բացահայտմանը, թե ինչու է միջերկրածովյան սննդակարգը հնուց ի վեր համարվում երկարակեցության գրավական: Նրանց խուքով, մրգերով, բանջարեղենով, ձկով եւ ձիթայուղով հարուստ սննդակարգը կարող է կանխել ԴՆԹ-ի վնասվելը, ինչը տեղի է ունենում տարիքի հետ:

Արյան նմուշները, որոնք գիտնականներ տասը տարի շարունակ վերցրել են հազար կամավորներից, ցույց են տվել, որ միջերկրածովյան սննդակարգը պաշտպանում է տելոմերները՝ քրոմոսոմների մանր ծայրամասերը, որոնք պաշտպանիչ գործառույթ ունեն: Ժամանակի ընթացքում դրանց կրճատումը կենսաբանական ծերացման կարեւորագույն գործոններից մեկն է դառնում:

²èúðº²Î²Ü

## ԻՆՉՊԵՍ ՆՎԵՐ ԸՆՏՐԵԼ



***Ամեն անգամ, հյուր գնալիս, առանձնապես ծննդյան օրերի առիթով, միշտ կանգնում ենք առաջին հայացքից ծիծաղելի հիմնախնդրի առջեւ. ի՞նչ նվեր տանել: Գուցե օգնեք:***

***Տ. Մանուկյան***

***Բաթումի***

Իհարկե, դա ճաշակի խնդիր է, սակայն թանկարժեք իրեր գնելու կարիք չկա: Դրանով մենք նվեր ստացողին եւ մեզ հետ հրավիրված մյուս հյուրերին, որոնց գրպանին դա հարիր չէ, դժվարին կացության մեջ ենք դնում: Նվերը պետք է նախապես ընտրել, մտածված կերպով՝ հաշվի առնելով ստացողի հետաքրքրությունները: Միայն այդ դեպքում այն կուրախացնի:

Սեփական ձեռքերով պատրաստած ցանկացած իր շատ ավելի մեծ ուրախություն է պատճառում: Եվ հակառակը, դուք անտարբերություն կդրսեւորեք, եթե նվերը որեւէ ոչ պիտանի իր լինի: Զարմանաք, եթե ձեզ հետ էլ նույն կերպ վարվեն:

Անձնական իրեր, օրինակ, կանանց՝ օծանելիք, տղամարդկանց՝ փողկապ, ընդունված է նվիրել մտերիմ մարդկանց ու հարազատներին:

Կիրթ վարվելաձեւը ոչ միայն սովորեցնում է, թե ինչպես նվեր ընտրել, այլեւ թե ինչպես պետք է այն հանձնել եւ ինչպես ընդունել: Նվիրելիս՝ խուսափեք այնպիսի արտահայտություններից, ինչպես՝ «Ամբողջ օրը վազվզեցի, բայց ավելի լավ բան չգտա»:

Քաղաքավարի մարդը նվեր ստանալիս շնորհակալություն է հայտնում, բացում, նայում եւ կրկին շնորհակալություն հայտնում: Եվ անպայման՝ ժպիտով: Դժգոհությունը տեղին չէ, եթե նույնիսկ ձեզ այնպիսի բան են նվիրել, որից դուք արդեն ունեք: Հյուրը կարող է չիմանալ, եւ կարիք չկա այդ մասին նրան տեղեկացնել:

Եթե ձեզ կոնֆետներ, տորթ կամ մեկ այլ քաղցրավենիք են բերել, մի' մոռացեք հյուրասիրել ներկաներին:

Բոլոր դեպքերում ծաղիկները լավագույն նվերն են, այլ ոչ թե մեկ այլ նվերի հավելում: Ալ կարմիր վարդեր ընդունված է նվիրել մորը, կնոջը, քրոջը, հարսնացուին: Կարմիրը համարվում է սիրո գույն:

Դեկորատիվ ծաղկամաններով ծաղիկներ պետք է նվիրել մտերիմ մարդկանց կամ այն դեպքում, եթե գիտեք, որ տվյալ անձը ցանկանում է այդ ծաղկից ունենալ:

## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ



Իսկ դուք գիտե՞ք, որ գոյություն ունի մի բույս, որի պտուղները չափազանց համեղ են, սակայն ամեն ոք չէ, որ կհամարձակվի համտեսել, քանի որ դրանք անտանելի հոտ ունեն: Այդ բույսը կոչվում է դուրիան, աճում է Մալայզիայում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում. Շրի Լանկայում, Ֆիլիպիններում, ինչպես նաեւ Աֆրիկայում եւ Բրազիլիայում: Այդ մրգի հոտը համեմատում են հոտած սոխի, պանրի եւ սկիպիդարի հոտի հետ:

Հետաքրքիր է նաեւ այն հանգամանքը, որ ասիական երկրներում արգելվում է հասարակական վայրեր դուրիան բերել, քանի որ այդ բույսի մեկ պտղի հոտը շատ սուր զգացվում է նաեւ հեռվից: Գոյություն ունի նույնիսկ հատուկ նշան՝ խաչով ջնջած դուրիան, որը նշանակում է, որ տվյալ գոտի դուրիան բերելն արգելվում է: Այն նաեւ արգելվում է հասարակական փոխադրամիջոցներում, քանի որ դրա հոտին դիմանալը շատ դժվար է:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՓՈՔՐԻԿԻՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՔՆԵԼ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Բոլոր տրադիցիոն գործողություններից հետո, փոքրիկին պառկեցրեք քնելու, գրկեք նրան, շոյեք գլուխը, կարող եք նաեւ մեջքը թեթեւակի մերսել: Ասացեք նրան, թե ինչ լավ բալիկ է նա, թե որքան եք սիրում նրան, հետո ասացեք, որ օրվա ընթացքում թափիկներն ու տոտիկները հոգնել են, ուզում են հանգստանալ: Ապա ասացեք նրան, որ նա արդեն մեծ է եւ պետք է ինքնուրույն քնի, ինչպես բոլոր մեծերը: Նշեք, որ դուք իր կողքին եք, որ վախենալու առիթ չկա, պարզապես կողքի սենյակում գործ եք անում: Սկզբնական շրջանում կարող եք նաեւ սենյակի դուռը բաց թողնել, քանի որ շատ երեխաներ վախենում են, երբ դուռը փակ է լինում: Ուշադիր եղեք, որ կանչելու դեպքում երեխայի մոտ գնաք: Սենյակ մտեք, հանգստացրեք փոքրիկին, համբուրեք նրան եւ էլի մենակ թողեք: Սկզբնական շրջանում ստիպված կլինեք մի քանի անգամ սենյակ մտնել՝ մինչեւ նա կքնի, սակայն աստիճանաբար կսովորի ինքնուրույն քնել:



Ծնողները պետք է համբերատար եւ լավատես լինեն, քանի որ ծնողի տրամադրությունը փոխանցվում է երեխային:

Եթե օրվա ընթացքում երեխան ժամանակի զգալի մասն անցկացնում է մայրիկի հետ, երեկոյան նրան կարող է հայրիկը կամ տատիկը պառկեցնել քնելու: Սովորաբար երեխաները հայրիկի հետ իրենց այլ կերպ են պահում՝ կամակորություն չեն անում եւ լսում են, մինչդեռ մայրիկի դեպքում կարող են փորձել արցունքներով կամ կամակորություններով ազդել որոշման վրա: Ուստի, ավելի հեշտ կլինի, եթե հայրիկը երեխային պառկեցնի քնելու:

Երբեմն երեխան ծնողների հետ շփման պակաս է ունենում: Բացը լրացնելու համար կարելի է երեկոյան հաճելի մթնոլորտ ստեղծել. հայրիկն ու մայրիկը միասին կարող են խաղալ երեխայի հետ, գրկել ու սիրել նրան, հեքիաթ պատմել, օրորոցային երգել: Իսկ քնելու ժամին երեխային պառկեցնելուց հետո համբուրեք ու դուրս եկեք՝ հավելելով. «Դե', հիմա մենակ քնի, մայրիկը գնա իր գործերին, որ վաղն էլ քեզ համար երգի»: Հաճելի պահը կրկնելու հեռանկարը կստիպի փոքրիկին ինքնուրույն քնել:

Մեկ այլ տարբերակ է երեխային տալ իր սիրելի փափուկ խաղալիքը, որ միասին, միմյանց գրկած քնեն: Այսպես երեխան իրեն ավելի հանգիստ կզգա ու ավելի հեշտ կքնի:

Ինքնուրույն քնելուն կնպաստի նաեւ ճիշտ օրակարգը: Երեխան պետք է հստակ քնի ժամ ունենա: Եթե նման ժամ չկա, աստիճանաբար սովորեցրեք, որ ամեն օր նույն ժամին պառկի քնելու: Մի մոռացեք նաեւ ամենօրյա զբոսանքները մաքուր օդում, դա եւս նպաստում է հանգիստ քնին:

Ինքնուրույն քնել սովորած երեխաները արագ են ննջում՝ 5-10 րոպեի ընթացքում:

Պետք է նաեւ հիշել, որ ամեն երեխա յուրօրինակ է, ուստի անհատական մոտեցում է հարկավոր: Ծնողը, ով ամենալավն է ճանաչում իր փոքրիկին, ավելի լավ կիմանա, թե որ պարագայում ինչպես վարվել:

Իսկ ինչ վերաբերում է ընդհանրապես առողջ քնելուն, ապա քնելուց կես ժամ առաջ գոլ ցնցուղ ընդունեք: Սրբվեք եւ հագնվեք, բայց ոտքերին ոչինչ մի հագեք: Վերցրեք խոշոր քարաղ, լցրեք թասի հատակին: Բոբիկ ոտքերով կանգնեք աղի վրա, 5 րոպե փոխեփոխ՝ մի ոտքից մյուսին հենվեք: Թասի մեջ բարակ շիթով գոլ ջուր լցրեք՝ շարունակելով տեղում քայլել: Երբ ջուրն ամբողջովին ոտնաթաթերը ծածկի, ծորակը փակեք: Սպասեք, մինչեւ ձեր շարժումներից աղը լրիվ լուծվի (3-4 րոպե): Թասից դուրս եկեք, ոտքերը պարզաջրեք սառը ջրով, չորացրեք խավավոր սրբիչով եւ բամբակե գուլպաներ հագեք:

Եթե անքնությունը տեւական բնույթ է կրում, ապա կարող եք հատուկ «քնաբեր» լոգանք ընդունել՝ թարմ նարնջի կամ մանդարինի կտրտած կեղեւով: Կեղեւի վրա պետք է եռջուր լցնել, թրմել, այնուհետեւ այդ թուրմը լցնել լոգարանի ջրի մեջ: Այս լոգանքը պետք է ընդունել քնելուց երկու ժամ առաջ:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Թե անկեղծության ծով ես անսահման՝ անմահ ես ծովի մարգարտի նման:

***ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ***
***(1914-1984)***
***Հայ բանաստեղծ***

Այն, ինչ հաճո չէ Աստծուն, չի կատարվի, ինչ էլ լինի:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(XII-XIII դդ.)***
***Վրաց բանաստեղծ***

Ամեն ոք գիտի, որ մահն անխուսափելի է, բայց քանի որ այն մոտ չէ, ապա ոչ ոք նրա մասին չի մտածում:

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***
***(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Ոչ մի անգամ թույլ մի տվեք ձեր ականջներին՝ հավատալու այն բանին, ինչ չեն տեսել ձեր աչքերը...

***ՕՄԱՐ ԽԱՅԱՄ***
***(1048-1131)***
***Պարսիկ բանաստեղծ***

Ամենադժբախտը մարդկանցից նա է, ում համար աշխարհում աշխատանք չի գտնվել:

***ԹՈՄԱՍ ՔԱՐԼԱՅԼ***
***(1795-1881)***
***Անգլիացի գրող***

Մեծ գործեր ստեղծելու համար հարկավոր է ապրել այնպես, կարծես թե չես մեռնելու:

***ՎՈՎԵՆԱՐԳ***
***(1715-1747)***
***Ֆրանսիացի փիլիսոփա***

Սիրել՝ նշանակում է մեկ ուրիշին ցանկանալ այն, ինչը բարիք ես համարում եւ, ընդ որում՝ ցանկանալ ոչ թե ի սեր քեզ, այլ ի սեր նրա, ում սիրում ես, եւ ձգտել հնարավորության սահմաններում նրան տալ այդ բարիքը:

***Ա.ԱՎԱԳՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²ÜºÎ¸àÎܺð

** Հանդիպում են երկու ընկեր:*

*- Ողջույն: Ինչո՞ւ ես այդքան տխուր:*

*- Ես որդի եմ ունեցել:*

*- Բայց դա շատ լավ է, դու պիտի ուրախանաս, ոչ թե տխրես:*

*- Ես այդպես էլ անում էի, քանի դեռ կինս այդ մասին չէր իմացել:*

** Երկու ընկեր զրուցում են: Նրանցից մեկն ասում է.*

*- Գիտե՞ս, իմ ընկերուհին ոնց որ բջջային հեռախոս լինի:*

*- Հա՞, երեւի փոքրի՞կ, ժամանակակից ու ֆունկցիոնա՞լ:*

*- Չէ հա, ուր էր, թե էդպես լիներ: Պարզապես հենց որ փողս վերջանում է, հետս չի խոսում:*

** Հանդիպում են երկու ընկերուհի.*

*- Դու արդեն հինգ տարուց ավելի է՝ նշանված ես այդ տղայի հետ, ինչո՞ւ չես ամուսնանում:*

*- Ես չեմ ուզում ամուսնանալ, երբ նա խմած է, նա էլ իր հերթին է հրաժարվում, երբ լուրջ է լինում:*

** - Մա'մ, մենք ինչի՞ ենք էսքան գեշ:*

*Մերը պատասխանում է.*

*- Բալե'ս, դու էս ստատուս կարդացողին չես տեսել:*

** Խանութում.*

*- Ասացեք, խնդրեմ, դուք պատահաբար համակարգչի հոտով օծանելիք չունե՞ք, վաճառողուհուն հարցնում է մի կին:*

*- Բայց ինչի՞ համար,- զարմանում է վաճառողը:*

*- Ուզում եմ գոնե մի ձեւով ամուսնուս ուշադրությունը գրավել:*

** - Մամ, Հարութն ասաց, որ ես հիանալի աղջիկ եմ: Կարելի՞ է այսօր նրան հրավիրեմ մեր տուն:*

*- Պետք չի: Թող նա շարունակի այդպես մտածել:*

** Փողոցում հանդիպում են երկու ընկերուհի.*

*- Քեզ դուր գալի՞ս է իմ նոր շրջազգեստը:*

*- Ներիր, բայց ես շատ եմ շտապում եւ վիճաբանելու ժամանակ չունեմ:*

** Ամերիկյան ընտանեկան իրավիճակ.*

*Կինը տագնապահար գոռում է՝ դիմելով ամուսնուն.*

*- Ջո՜ն, այստե'ղ արի, օգնի՜ր ինձ. իմ երեխաներն ու քո երեխաները ծեծում են մեր երեխաներին:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՎԱՎԵՐԱՑՎԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ 200 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

*Հայաստանի Ազգային ժողովը քվեարկությամբ վավերացրեց ՌԴ-ից 200 միլիոն ԱՄՆ դոլարի չափով պետական արտահանման վարկ ստանալու մասին համաձայնագիրը:*

Հայաստանի կառավարության և Ռուսաստանի կառավարության միջեւ 2015 թվականի հունիսի 26-ին Երեւանում ստորագրված «ՀՀ կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրին կողմ քվեարկեց 98, դեմ՝ 1 պատգամավոր:

Համաձայնագրով նախատեսվում է, որ ՌԴ-ի կողմից ՀՀ-ին տրամադրվող վարկային միջոցներով կֆինանսավորվեն ռուսական արտադրության ռազմական արտադրանքի մատակարարումները: Համաձայնագրով սահմանված է, որ պետական արտահանման վարկը տրամադրվում է 13 տարի ժամկետով, որից առաջին երեք տարիները՝ արտոնյալ պայմաններով, 3 տոկոս տոկոսադրույքով: Ընդ որում, Հայաստանի կողմից նախատեսվում է համաֆինանսավորում՝ համաձայնագրի շրջանակներում կնքվող պայմանագրի արժեքի 10 տոկոսի չափով ավանսային վճարումների տեսքով:

## ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

*Երեւանի գլխավոր պողոտաներից մեկը՝ Բաղրամյան պողոտան, շարունակում է փակ մնալ: Արդեն 11-րդ օրն է, ինչ քաղաքացիները, դեմ արտահայտվելով էլեկտրաէներգիայի թանկացմանը, շարունակում են շուրջօրյա ակցիաները պողոտայում:*

Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանի ՀԾԿՀ-ն հունիսի 17-ին որոշում էր կայացրել էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնել 6,93 դրամով: Հունիսի 19-ին, Երեւանի կենտրոնում՝ Ազատության հրապարակում, մեկնարկեց բողոքի ակցիա՝ հանրահավաք, այնուհետեւ՝ նստացույց: Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը հունիսի 27-ին խորհրդակցություն անցկացրեց երկրի տնտեսական քաղաքականության պատասխանատուների հետ, որի ընթացքում շարունակվել են Հայաստանի էներգետիկ անվտանգությանը, այդ համակարգի հետագա առողջացմանը եւ առկա խնդիրներին լուծումներ գտնելուն ուղղված քննարկումները: Սերժ Սարգսյանը նշեց, որ սակագնի բարձրացումը չեղյալ հայտարարելը ծայրահեղ վտանգավոր է: Ուստի, մինչեւ եզրակացության կազմումը այդ ընկերության կողմից կառավարությունը իր վրա կվերցնի սակագնի բարձրացման ամբողջ բեռը: Դրանից հետո, «Ոչ թալանին» նախաձեռնության անդամները որոշեցին գալ ու ակցիան շարունակել Ազատության հրապարակում, սակայն ցուցարարների մի մասը մնաց Բաղրամյան պողոտայում:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Հունիսի 29-ին Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը ընդունեց Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Մերձավոր Արեւելքի եւ Կենտրոնական Ասիայի վարչության տնօրեն Մասուդ Ահմեդին:*

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը բարձր գնահատեց ԱՄՀ գործունեությունը Հայաստանում՝ ընդգծելով, որ, հիմնադրամի հետ երկար տարիների համագործակցության արդյունքում, երկրում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել, եւ տնտեսության մեջ արձանագրված հաջողությունները մեծապես պայմանավորված են նաեւ այդ փոխգործակցությամբ:

Սերժ Սարգսյանը կարեւորեց ԱՄՀ գործադիր խորհրդի կողմից «երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» հերթական վերանայման արդյունքների հաստատումը:

Մասուդ Ահմեդը եւս բարձր գնահատեց Հայաստանի հետ ԱՄՀ համագործակցությունը՝ ընդգծելով, որ ԱՄՀ-ն տարիներ ի վեր եղել եւ մնում է Հայաստանի գործընկերը:

Հանդիպմանը երկուստեք կարեւորվել է գործարար միջավայրի բարելավման, ներդրումների ներգրավման, նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ աշխատանքը:

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ՇԵՄԸ ՉԻ ՓՈԽՎԻ



*Միասնական քննությունների դրական նվազագույն միավորի շեմը չի փոխվելու. 7,5 միավորը մնալու է: Այս մասին նշել է Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Նախարարը իր գրառմամբ պատասխանել է դիմորդների եւ ծնողների մի շարք հարցերին:*

«Այս պահին անցողիկ միավորներ հրապարակել հնարավոր չէ, քանզի առջեւում է քննությունների լրացուցիչ փուլը: Քննությունների հիմնական արդյունքների ամփոփումից հետո, մնացած թափուր տեղերի մասին կտրվի լրացուցիչ տեղեկություն, որպեսզի դուրս մնացած, բայց դրական միավորներ ունեցող դիմորդները կարողանան կողմնորոշվել: Անհաջողության մատնված դիմորդները կկարողանան իրենց ուժերը փորձել նաեւ հեռակայի ընդունելության ժամանակ:

Հաջողություն եմ մաղթում բոլորին»,- նշել է նախարարը:

Տասնմեկ հազարից ավելի դիմորդ այս տարի հունիսի 2-ից մասնակցում է միասնական քննություններին: Քննությունները անցկացվում են հանրապետության 34 քննական կենտրոններում:

## ՆՎԱԶԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

*Հայաստանում նվազագույն աշխատավարձը հուլիսի 1-ից ավելանում է 5 հազար դրամով՝ կազմելով 55 հազար դրամ: Համապատասխան փոփոխությունը կատարվել էր «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի օրենքում 2014 թվականին:*

Հայաստանի Ազգային ժողովի որոշմամբ, 2015թ. սոցիալական ոլորտին պետական բյուջեով հատկացվել էր 385 մլրդ դրամից ավելի գումար կամ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի ավելի քան 29 տոկոսը: Բացի այդ, սոցիալական ոլորտին բյուջեից լրացուցիչ հատկացվել էր 41 մլրդ դրամ՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Աշխատավարձերի նախորդ բարձրացումը եղել էր 2014 թվականի հունվարի 1-ից, երբ նվազագույն աշխատավարձը 45 հազար դրամի փոխարեն, դարձավ 50 հազար դրամ: Իսկ ավելի վաղ, 2013թ. հուլիսի 1-ից, Հայաստանում նվազագույն աշխատավարձը բարձրացել էր 10 հազար դրամով՝ 35 հազար դրամից դառնալով 45 հազար դրամ:

## ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

*Գյումրիում տեղի ունեցած Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության դեպքի առթիվ Ռուսաստանի իրավապահների կողմից հարուցված քրեական գործի վարույթը, ընթացակարգային հարցերի կարգավորումից հետո, գործը փոխանցվելու է Հայաստանի քննչական կոմիտեի վարույթ:*

«Հստակ ժամկետներ այս պահին նշել հնարավոր չէ: Սակայն հստակ է, որ սպանության գործը քննելու են ՀՀ իրավապահները, արդարադատությունն իրականացնելու են ՀՀ դատարանները, մեղադրանքը պաշտպանելու է գործով հսկողություն իրականացնող դատախազը, դատավճիռը կայացվելու է Հայաստանի Հանրապետության անունից»,- հայտնեցին ՀՀ գլխավոր դատախազությունից:

«Հաշվի առնելով գործողության նկատմամբ հանրային մեծ հետաքրքրությունը՝ դրան առնչվող թույլատրելի տեղեկատվությունը պարբերաբար կհրապարակվի պաշտոնական հաղորդագրությունների միջոցով»,- նշված է ՀՀ գլխավոր դատախազության գրավոր պատասխանում:

Հիշեցնենք, որ Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների սպանությունը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 12-ին, նրանց մահը վրա է հասել հրազենային վնասվածքներից: Ավետիսյանների ընտանիքից ողջ էր մնացել 6 ամսական փոքրիկը՝ Սերյոժա Ավետիսյանը, ով կտրոն-ծակող գործիքից ստացած վնասվածքներով տեղափոխվել էր Երեւանի բժշկական կենտրոն, ապա՝ յոթ օր հետո մահացել: Կասկածյալին ռուս սահմանապահները հայտնաբերել են հայ-թուրքական սահմանը հատելու փորձ կատարելիս եւ հանձնել 102-րդ ռուսական բազայի հրամանատարությանը:

Քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու եւ ավելի անձանց սպանություն), Վալերի Պերմյակովին քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Վալերի Պերմյակովն ընդունել է առաջադրված մեղադրանքը:

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*Ծննդյան օրվա առթիվ, Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորանքներ եւ բարեմաղթանքներ է ստացել օտարերկրյա պետությունների ղեկավարներից, միջազգային կազմակերպությունների, պետական եւ հասարակական հայտնի գործիչներից, անհատներից: Ի թիվս այլ երկրների ղեկավարների, Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանին ծննդյան օրվա կապակցությամբ շնորհավորական ուղերձ է հղել նաեւ Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինը:*

«Վրաստան» թերթի աշխատակազմը եւ ընթերցողները շնորհավորում են Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանին ծննդյան 61-ամյակի առթիվ, մաղթում քաջառողջություն եւ նորանոր հաջողություններ՝ ի նպաստ Մայր հայրենիքի:

### ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՋԱՀԸ ՎԱՌԵՑԻՆ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

*Հունիսի 28-ին, Անթիլիասի Սուրբ Նահատակների մատուռում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսը հանդիսավորապես վառեց Համահայկական 6-րդ խաղերի ջահը եւ բարի երթ ու հաջողություն մաղթեց կազմակերպիչներին ու մարզիկներին: Ջահավառությանը ներկա էին Միաբան հայրեր, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը եւ նրա գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին ծնունդով վրաստանցիներ՝ «Ապավեն» ընկերության հիմնադիր տնօրեն Գագիկ Աղաջանյանը, գրող-հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը եւ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:*

### ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ՝ ԵՐԳԻՉ ՀԱՐՈՒԹ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆԻՆ

*Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է հայտնի երգիչ, երաժիշտ Հարություն Փամբուխչյանին եւ ծննդյան 65-ամյակի առթիվ, ինչպես նաեւ հայ երաժշտական արվեստը ներկայացնելու գործում ներդրած նշանակալի ավանդի համար պարգեւատրել ՀՀ վարչապետի հուշամեդալով:*

*Հարություն Փամբուխչյանը շնորհակալություն է հայտնել վարչապետին իր 50-ամյա բեմական գործունեությունը բարձր գնահատելու համար:*

### ԱՎԱՐՏՎԵՑ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԹՎԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

*«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունն արդեն ավարտել է Հայաստանի տարածքում վերգետնյա թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի ներդրման աշխատանքները:*

*Անալոգայինից թվային հեռարձակման անցնելու ընթացքում, սոցիալական հնարավոր խնդիրները սահուն հաղթահարելու նպատակով, Հայաստանի Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ ընդունվել է «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի համաձայն, անալոգային հեռարձակման վերջնաժամկետը երկարաձգվում է մինչեւ 2016 թվականի հունվարի 1-ը:*

### ՎԱԽՃԱՆՎԵԼ Է «ՇԱՀՄԱՏ-64»-Ի ՀԱՂՈՐԴԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

*Հունիսի 27-ին, կյանքի 68-րդ տարում, կյանքից հեռացավ «Շախմատ-64» հաղորդաշարի հեղինակ եւ վարող, «Շախմատային Հայաստան» հանդեսի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր Գագիկ Հովհաննիսյանը:*



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒԼԻՍ



*02.07.2015 Եղիսե մարգարեի հիշատակության օր*

*04.07.2015 Քրիստոսի 12 առաքյալների եւ Սուրբ Պողոս 13-րդ առաքյալի հիշատակության օր*

*05.07.2015 Բարեկենդան Վարդավառի պահոց*

Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթապահքը Հայոց եկեղեցում կոչվում է Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը նավակատիք է, այսինքն՝ այդ օրը թույլատրվում է ձկնեղեն եւ կաթնեղեն օգտագործել:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

# ՏՈԼՄԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

***«Տոլմայի փառատոն-2015» վրացերենով եւ հայերենով ցուցապաստառը հայկական տոլմա համտեսելու էր հրավիրում բոլորին: Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախաձեռնությամբ, Վիրահայոց թեմի հովանավորությամբ, անհատ բարերարների աջակցությամբ, 2015 թվականի հունիսի 28-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում տեղի ունեցավ հերթական փառատոնը:***



Հայկական հարուստ մշակույթի արժեքներից մեկը ազգային խոհանոցն է իր բազմազանությամբ: Արդեն բարի ավանդույթ է դարձել Թբիլիսիում փառատոնի միջոցով ներկայացնել եւ ժողովրդականացնել հայկական ուտեստները՝ գաթան, հարիսան, տոլման:

Առավոտից տոլմայի ախորժալի բուրմունքը տարածվել էր ողջ Հավլաբար թաղամասում: Եկեղեցու բակում շարված սեղաններին տեղ էին գտել թբիլիսահայ տիկնանց պատրաստած տոլմայով կաթսաները: Այս տարի, հաշվի առնելով մասնակիցների մեծաթիվ լինելը, որոշվեց անցկացնել միայն փառատոն՝ հնարավորություն ընձեռելով մասնակիցներին ներկայացնելու իրենց խոհարարական վարպետությունը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը ողջունեց ավանդական տոլմայի փառատոնը, օրհնեց բոլոր մասնակիցներին:

## ՀՈԲԵԼՅԱՆ

# ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՇՈՒՂ ԱԼԻՔ-ՋԱՎԱԽՔԻ ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻՆ

***Հունիսի 27-ին Ախալքալաքիում տեղի ունեցավ հոբելյանական մեծ համերգ՝ նվիրված տեղի հայ երգի երախտավոր, աշուղ Ալիք-Ջավախքի ծննդյան 65-ամյակին:***



Ալիք-Ջավախքի գործունեությունն ուղղված է աշուղական երգարվեստի զարգացմանը, նրա երգարվեստի, պարարվեստի, թատերական արվեստի հարատեւմանը, հայ եւ վրաց մշակույթների մերձեցման գործին: Ալիք-Ջավախքի ստեղծագործական ուղու մասին կարելի է կարդալ նաեւ «Ջավախք» համույթի սոցիալական կայքէջում:

Համերգին իրենց արվեստը ներկայացրին աշուղ Լեյլին, սիրված երգիչներ Մավր Մկրտչյանը, Սարգիս Զոփունյանը, Գրիգոր Դանիելյանը, Ռաֆիկ Նանայանը: Ելույթ ունեցան աշուղ Ալմաստը եւ նրա «Ալմաստ» համույթը, Արտակ Մարգարյանի «Գումբուրդո» համույթը, Նաւլեթ Քեյանի «Վաչիան» համույթը, Վրաստանի պարարվեստի միության պարի պետական համույթը (ղեկ.՝ Յուրի Թորաձե), Ախալքալաքիի աշուղական համույթը, Սպարտակ Վարդիկյանի ժողգործիքների համույթը, Նինոծմինդայի երգի-պարի համույթը:

Համերգին ներկա էին հյուրեր Թբիլիսիից, Վրաստանի տարբեր շրջաններից, Վրաստանի մշակույթի ներկայացուցիչներ եւ Վրաց ուղղափառ եկեղեցու Ախալքալաքիի մետրոպոլիտ Նիկոլոզ սրբազանը, ինչպես նաեւ հյուրեր Հայաստանից ու Ռուսաստանից, Հայաստանի սփյուռքի ու մշակույթի նախարարության պաշտոնյաներ, Հայաստանի եւ Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ:

*ԿԱՐԻՆԵ ՔՍՊՈՅԱՆ*

*ք. Ախալքալաքի*

***«Վրաստան» թերթը շնորհավորում է Ալիք-Ջավախքի ծննդյան 65-ամյակը, մաղթում առողջություն, երջանկություն եւ նորանոր ստեղծագործական վերելքներ:***

## ՑԵՐԵԿՈՒՅԹ

# ՀՐԱԺԵՇՏ՝ «ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ» ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻՆ

***Հունիսի 26-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում, տեղի ունեցավ «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի 2014-2015 ուստարվա շրջանավարտների հրաժեշտի ցերեկույթը:***



Շրջանավարտները ցուցադրեցին Հայոց եկեղեցու, մայրենի լեզվի ու Մայր հայրենիքի նկատմամբ մեծ սիրով տոգորված այն ամենը, ինչը նրանց սովորեցրել էին ուսուցիչներ Լալա Գեւորգյանը, Օքսաննա Շարոյանը, Օքսաննա Օսիպովան, Մետաքսյա Ղազարյանը, Գեւորգ սարկավագ Անտոնյանը, Հովհաննես Շահնազարյանը: Ու տարածվեց փոքրիկների սահուն արտասանությունը, երգն ու պարը՝ արժանանալով ներկաների դրվատանքին:

Երեխաներին մանկության նոր, առավել պատասխանատու շրջան ոտք դնելու կապակցությամբ շնորհավորեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի տիկին Էլեոնորա Վարդանյանը եւ փոքրիկներին բաժանեց գեղեցիկ նվերներ, իսկ «Հայարտուն» կենտրոնի հիմնադիր, բարերար Բորիս Սաակովը, ով արդեն չորս տարի անընդմեջ Նովոսիբիրսկից իր այցելությունները Թբիլիսի հարմարեցնում է նախակրթարանի միջոցառումներին, արժեւորեց կրթօջախի գործունեությունը:

Տոնահանդեսն ամփոփեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը՝ գնահատանքի խոսքեր ուղղելով ուսուցիչներին, դայակին, բոլոր ծնողներին: Շրջանավարտներին բաժանվեցին ավարտական վկայականներ:

## ՄԱՐԶԱԿԱՆ

# ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Հունիսի 28-ին Բաքվում եզրագիծը հատեցին առաջին եվրոպական խաղերը, որին մասնակցում էին 50 երկրների ավելի քան վեց հազար մարզիկ-մարզուհիներ:

Թիմային հաշվարկում Վրաստանի ներկայացուցիչները՝ նվաճելով 2 ոսկե, 6 արծաթե եւ 8 բրոնզե, ընդհանուր առմամբ՝ 16 մեդալ, զբաղեցրին 21-րդ հորիզոնականը:

Հայաստանի թիմը, իր ակտիվում ունենալով ընդամենը մեկ արծաթե պարգեւ, հանգրվանեց 36-րդ տեղում:

Թիմային առաջնությունում 164 (79 ոսկե, 40 արծաթե եւ 45 բրոնզե) մեդալներով առաջին տեղը գրավեց Ռուսաստանի թիմը: Ընդհանուր առմամբ՝ 47 (21, 15, 20) մեդալով երկրորդը Ադրբեջանի թիմն էր:

«Վրաստան» թերթի խմբագրությունը իր վշտակցությունն է հայտնում Վրաստանի հանրային ռադիոյի հայկական հաղորդումների նախկին բազմամյա աշխատակցուհի, 64-ամյա



*Մայա Հայկի ԴՎԱԲԵՐԻՁԵ-ԲԱՏԻԿՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Դիմավոր եւ ... բայեր: 6.Քաղաք Ռուսաստանում: 9.Վրաստանի թագուհի: 10.Դալար, նորածիլ: 12.Ալ.Շիրվանզադե «...ի ականջը»: 13.Մսով ճաշատեսակ: 16.Մեքենայի ...: 19.Մազ, վարս, գիսակ: 20.Թբիլիսյան տրանսպորտ: 22.Հիվանդություն: 23.Անուլ, չբեր: 26.Վրաստանում ծնված բանաստեղծ Տերյանը: 28.Թափանցիկ շինանյութ: 31.Գոյություն ունի: 32.Անսասան, հաստատուն: 33.Հայերենի խոսքի մաս: 35.Երկարության չափման միավոր: 36.Վախ, ահ ներշնչող: 39.Պետության խորհրդանիշ: 41.«Յոթն ... է քառասուն» (երգ): 43.«...ը պոպոզ, անունը Կիկոս» (Հովհ.Թումանյան): 44.Դրամական միավոր Եվրոպայում: 46.Վերդիի հայտնի օպերան: 47.Հանրահայտ ֆիզիկոս ... Պասկալ: 49.Ահավոր, շատ մեծ: 52.Գերանը ճեղքելու միջոց: 54.Հայոց արքա, Շամիրամի սերը: 56.Ոտքի արատ ունեցող: 57.«...ս անտեր, ընկել եմ հանդեր» («Անուշ»): 58.Իքս, իգրեկ, ...: 59.Երգահան ... Եկմալյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Հյուսիսատլանտյան դաշինք: 3.Գազանի բերան: 4.Ե՛վ Ազնավուր, ե՛ւ Պերրո: 5.Նոր, նորաթուխ: 7.Գործվածքի տեսակ: 8.«... կեղնի, ... չերթանք մըր էրգիր» (Ս.Կապուտիկյան): 11.Ջրի, ավազի եւ ցեմենտի խառնուրդը: 14.Հացազգի բույս: 15.Կին եւ ...: 17.Ծառի մաս: 18.Ծայր, սահման: 19.Աստվածուհի հունական դիցաբանության մեջ: 21.Գետի աջ ու ահյակ «զավակները»: 22.Համից զուրկ: 24.... դասարան: 25.Առողջարանային քաղաք Հայաստանում: 26....ն անցավ անհետեւանք: 27.... Դժոխք (հայ ֆիդայի): 29.Ձեյրան, այծյամ: 30.Ոչ տղամարդու: 34.Աֆրիկայի բնակիչ սեւամորթ: 37.Անկուշտ, աչքածակ: 38.Գծագրական թուղթ: 40.Թխվածքի շերտ: 42.Վրաստանի արդարադատության ...: 45.Թշնամի: 47.Քաղաք Ֆրանսիայում: 48.Մատենագիր ... Նշեցի: 50.... եւ ավարտ: 50.Տերունական, ամենօրյա ...: 53.Գրական ստեղծագործության տեսակ: 55.Հին զենք:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Մյուռենե: 8.Ամիկո: 9.Սեն: 10.Վզնոց: 13.Դիեգո: 18.Պոռշ: 19.Առաջանալ: 22.Անիրձ: 23.Իդիլիա: 28.Ուտեստ: 29.Բերած: 32.Որմ: 33.Փիսո: 34.Ասանկ: 37.Բոա: 39.Օլգա: 41.Ալյու: 44.Հրատ: 46.Ժորժ: 47.Բաս: 49.Կոխ: 50.Սամսունգ: 52.Ցիան: 54.Գաննա: 55.Դեզա: 56.Յա: 57.Անդին: 58.Ծածկ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Քուին: 2.Լենց: 3.Ժեստ: 4.Կանո: 5.Թիթեռ: 6.Կոտոշ: 11.Ջառա: 12.Ողջի: 14.Իպրիտ: 15.Գորիս: 16.Ինձ: 17.Էլի: 20.Անդրի: 21.Աղածո: 24.Դումա: 25.Լեքա: 26.Ատակ: 27.Դոդո: 30.Եփել: 31.Ասմա: 35.Ստաժ: 36.Նոսր: 37.Բոր: 38.Ավտոգեն: 40.Գուսան: 42.Լոբի: 43.Ուժանակ: 44.Հասան: 45.Ակնդի: 48.Ասամ: 51.Մնա: 52.Ցած: 53.Այծ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445